ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 453-Ա/2 «26» մարտի, 2021 թ.

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2021» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգի 11-րդ կետը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետը, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի փետրվարի 22-ի N 212-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2021 թվականի մարտի 26-ի N2 արձանագրությունը և ելնելով 2021 թվականի բյուջետային հատկացումների ծավալից՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2021 թվականի ապրիլի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՎԱՀՐԱՄ ԴՈՒՄԱՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2021 թվականի մարտի 26-ի
N 453-Ա/2 հրամանի

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2021» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿ

N	Ծրագրի անվանում	Ղեկավար	Գիտական կազմակերպություն	Խորհրդատու
1	Արցախի Հանրապետության կաթնասունների ֆաունայի արդի վիճակը և մոնիթորիգը	Հայրապետյան Վահրամ Տորիկի	««Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ	Պապով Գեորգի Յուրիի
2	Արցախի բնակչության կյանքի որակի բժշկակենսաբանական վերլուծությունը հետպատերազմյան շրջանում	Գալստյան Հասմիկ Գրիգորի	«Արցախի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	Մարդիյան Մարինե Արարատի
3	Հակամանրէային կենսապատրաստուկների ազդման հետազոտությունն ընդդեմ թոքաբորբի (պնևմոնիայի) հարուցիչների աճի	Իսրայելյան Արևիկ Լևոնի	«Արցախի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	Տխրունի Ֆլորա Նուբարի
4	Էկոլոգաերկրաքիմիական հետազոտություններ Արցախի տարածքում.Ստեփանակերտ քաղաքի փողոցային փոշու և դրա հետ ասոցացված պոտենցիալ տոքսիկ տարրերի մակարդակների գնահատումը հետպատերազմյան շրջանում	Սարգսյան Քրիստինա Վյաչեսլավի	«Արցախի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	Սահակյան Լիլիթ Վարուժանի
5	ԱՀ տարածքում գործող կաթի վերամշակման գործարաններում առաջացող կաթի շիճուկի բաղադրատարրերի համալիր հետազոտություն և ԿԱՄ-երի անջատում	Առստամյան Լիլյա Աշոտի	«Արցախի գիտական կենտրոն» ՊՈԱԿ	Ծատուրյան Ավետիս Հովհաննեսի